ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի փորձագետ Օֆելյա Հայրիկի Վահանյանի 2026թ. հոկտեմբերի 12-ից մինչև սույն թվականի նոյեմբերի 19-ը իրականացած աշխատանքների վերաբերյալ:

Ես՝ Օֆելյա Հայրիկի Վահանյանս, 2026 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 19-ը աշխատելով ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում՝ որպես փորձագետ, նշված ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- մասնակցել եմ քաղաքացիների ընդունելության, դիմումների ընդունման և ուսումնասիրության, ինչպես նաև դրանց կատարման համար անհրաժեշտ ընթացքի ապահովման աշխատանքներին,

- իրականացրել եմ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրություն և համապատասխան ծառայությունների մատուցման շրջանակում անհրաժեշտ աշխատանքներ,

- մասնակցել եմ քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերականգնման, ակտային գրառումներում ուղղումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիմումների ընդունման և ուսումնասիրման աշխատանքներին,

- իրականացրել եմ ՔԿԱԳ ակտային գրանցումների և արխիվային փաստաթղթերի որոնման, ստուգման և անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման աշխատանքներ,

- մասնակցել եմ ՔԿԱԳ արխիվի փաստաթղթերի պահպանության, դասակարգման և թվայնացման աշխատանքներին,

- իրականացրել եմ ԱՊՀ երկրների իրավասու մարմիններից ստացված հարցումների և փաստաթղթերի ընդունման, հաշվառման և համապատասխան հասցեատերերին փոխանցման աշխատանքներ,

- մասնակցել եմ քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված լրացուցիչ ծառայությունների համար նախատեսված վճարների ընդունման աշխատանքներին,

- քաղաքացիներին հեռախոսազանգերի և դիմումների միջոցով տրամադրել եմ անհրաժեշտ պարզաբանումներ՝ ՔԿԱԳ ծառայությունների, դիմումների ներկայացման կարգի և անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ,
- մասնակցել եմ ՔԿԱԳ սպասարկման կենտրոնի առօրյա աշխատանքների կազմակերպմանը և քաղաքացիների պատշաճ սպասարկման ապահովմանը
- կատարել եմ աշխատանքային գործընթացից բխող այլ հանձնարարություններ:

Հարգանքով՝ Օֆելյա Վահանյան

19.11.2026թ.